



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

ԱԼԱԶԱՆ

ՅԵՐԳԵՐ
ԿԱՌՈՒԿԱՄԱՆ
ՂԱՂՐԱՆԱԿԻ

ՊԵՏՐԱՍ-1930

899



891.99
6-28

ԱՐԱՐԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԳԵՐ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՅԵՎ

ՀԱՂԹԱՆԱԿԻ

23786/1346

A 26717



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
1930-04-15



Հրատ. № 1142

Գրառեալ. № 5796 (բ) Պատ. № 953 Տիրաժ 3000
Գետհրատի յերկըորդ տպարան, Ցերեանուճ.

**Հայաստանի Նոյեմբերյան
Հեղափոխության առևտամյակին**

ԴԻՄՈՒՄՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

1

2

Խսկ զու պղետ, զու մարդ անզուլ,
արյան մարտերն այն զովերգող,
զու սոսկ զինվոր այս զու մարտում—
բազուկներով ու քո յերզով.
յերզիր գարձյալ փառք ու երա,
և կառուցումն այս հաղթական,
յերզիր զբոշն այս հուրհրան,
և բազուկները ամրակամ:

ՅԵՐԶԻՐ արնով, յեղիր խրոխտ,
յերզիր մուրճով, յեղիր հերոս:

10 ապրիլի, 30 թ.



ՅԵՐԳԵՐ ՔՍԱՆՎԵՑԻՆ

100

* *

Արեւ ծագեց բորբ, լուսավարաբ,
այն զժնի ու մութ գիշերից հետո,
այնքան կենարար և այնքան առատ
արեւ ծագեց բորբ, լուսավարաբ:
Մենք զբավեցինք դիրքերը հերթով,
բերգերը բոլոր ձեր արնով ներկած,
արեւ և հորդել բորբ լուսավարաբ
այն զժնի ու մութ գիշերից հետո:

29 թ., սեպտ.

ԱՐՅՈՒՆՈՏ ԳԻՇԵՐԸ

1

Գիշերը՝ մութ, գիշերը՝ սև, գիշերն՝ անվերջ, մոայլաղեմ,
գիշերը մի հսկա չղջիկ, տարածել ե թևերն իրա.
թևերովը նա ծածկել ե անապատը, սար ու հանդեր:
Գիշերը՝ վոնց ամենակուլ ու ահռելի բացված յերախ:

Ու գիշերում սանձը կտրած արշավում ե դաժան
քամին,
հուտւ յե կանչում ու հըռնդում — անծայրածիր
անապատում.
ուզում ե նա քանդել ամենն ու կործանել մի անգամից,
քամին տերն ու տիրակալը, քամին մենակ
անապատում:

Թևերովն իր նա խառնում ե ավագները անապատի,
հարձակվում ե, ու նահանջում, ու դրավում, ու
արշավում,
ու հըռնդում, ու փընչում ե — քամին անսանձ, ու
անպատիժ,
կծկվել են ժայռերն անգամ, անողնական ալդ
գիշերում:

Ծովը հուզված ու վրդովված կրծոտում և ափերն իրա,
շըպրառում և ափերից դուրս փըրփրակալած ջուր ու
ավագ.

Վոնց մի հսկա—նա զալաբվում, տրորվում և միջքի
վրա:

Ծովը՝ հուզված, ծովը՝ մոայլ փըրփրակալած ու
վրդովված:

Գիշերը՝ մութ, գիշերը՝ սե, գիշերն անվերջ, մասյլաղեմ
գիշերը՝ ծանը, քամին՝ անսանձ, և շնազալը, և բորենի
գիշերը վոնց հսկա չղջիկ, կամ ահազին մի բու անդեմ:
Գիշերը՝ մութ, և փոթորիկ, և շնազայլ, և բորենի...

2

Դողի նման—կասկածամիտ ու կրծկված ու չորեքթաթ,—
գաղտագողի լուռ սողում և, ավագի մեջ մի սե գնացք.
Դուրս են նայում ինչ վոր դեմքեր զարհուրելի ու
մտավախ.

Հուրջը՝ ավագ, Հուրջը՝ խավար, Հուրջը՝ գիշեր մի
սեագնած:

Նա կանգ առավ ավագի մեջ, վորակս մթին մի թշնամի,
գետին իջան փըսփսուկով, մութ ըստվերներ
խորհրդավոր,
Նորից լելան, Նորից իջան, Փըսփսացին կասկածամիտ:
Շուրջը՝ ավագ, Հուրջը՝ խավար, Հուրջը՝ գիշեր մի
դարավոր...

Ավագները խըշխըշում են, ավագները վըշվըշում են,
ափսոսում, են ավագաներն իսկ կորուստը ծանր այդ
գիշերվա.

ողակի մեջ, նրանց ծեծում, և հայհոլում, և քշում են,
դասակարգի զոհը նրանք, արյունաներկ սեղան բերված:

• •

...Ու շարժվեցին մութ ստվերներ... վորոտացին
համազարկեր...

Ընկան նրանք արնաշաղախ, իրար կողքի, իրար գրկած:
Մահամռայլ անապատի ու արյունի, ավագի մեջ—
Լսվում ելին նվազ ձայներ—«Մենք մեռնում ենք, բայց
դեռ կդանք...»

Ու ծծեցին ավագները շրթունքներովն իրանց
պապակ—
արյունը թարմ ու անաղարտ—դասակարգի սրտից
ժայթքած.

Վոնց վոր մահերգ—վոռնաց նորից, սուլեց նորից
քամին ագահ
ու հոնդաց, խառնեց նորից ավագները՝ արլունով թաց:

Գիշերը՝ մութ, գիշերը՝ սև, գիշերն՝ անվերջ մռայլադեմ,
գիշերը՝ ծանր, քամին՝ անսանձ, և շնագայլ, և բորենի,
գիշերը՝ վոնց հսկա չղջիկ, կամ ահազին մի բու անդեմ,
գիշերը՝ մութ, և փոթորիկ, և շնագայլ, և բորենի...

Առավոտը արեն յելավ—մուայլադեմ, արնակուտակ,
աչքերի տակ փոված տեսավ անլսելի վոճիրն ալդ նոր.
սարսացին ավազները նրա գունատ ցոլքերի տակ:
Անապատը մի դամբաբան ու արել—վոնց սկավոր:

4

— Հեր, ավազում, մութ գիշերում, մահը գրկած մեր
ընկերներ,
կենդանի յե՛ղասակարզը. ձեր պալքարում հաղթել ենա:
Տանջանքներով այն ձեր գծած ու փալփալած
կածանը նեղ —
մենք լալնացրել դարձրել ենք — յերկարածիզ, լայն
պողոտա:

1926 թ., սեպտ.



* * *

1

Վոռնաց վերջին չախկալը ու ավաղը խառնեց:
Հեռվում վիշկաներ մուժում գիշերվա:
Կապարածանը գիշեր, արնափետուր առնետ:
Վիշկաների բանակ դառն զլիսատված:

Մեռնող ձեռներ ջղագալար, ավագները խառնող.
արնածանիք, արնածիծաղ Դենսաերվիլ—
շնագայլեր շուրջը, կղակներով արնոտ:
Վիշկաների արթուն բանակները հեռվից:

Վիշկաներում վոխն և լեռում ու հորձանվում—
փոթորկահույզ, վոնց փրփրաբաշ կասպիական.
Քսանվեցի արնոտ զրոշն և բարձրանում—
վիշկաների վերջին զրոհն և մարտական:

**ՄԵՆՔ կերտում ենք ձեր վառ անունը յերկաթից,
ձեր վրեժը՝ զավոդներ և հանում վոտքի.
ծուփի և առել անծայրածիր Կասպիականը յեռանդի—
վիշկաներում, զավոդներում. յերակներում դասակարգի:**


**Զեր զբոշի տակ կարմրածիանք ու արնաներկ—
դուրս Ենք յեկել հաղթանակող վերջին մարտի.
յերկաթավոր վաշտեր, յերկաթավոր վաշտեր
ու զավոդներ յելնող ու բանակներ անթիվ:**

**ՄԵՆՔ կերտում ենք ձեր վառ անունը պողպատից,
ձեր վրեժը՝ զավոդներ և հանում վոտքի...**

1929 թ.



ՅԵՐԳԵՐ ԿԱՌՈՒՑՄԱՆ



ՊՈԵՏՆ ԱՌԱՎՈՏՑԱՆ


Նիղակեց տագնապով սարերի կողին,
արնագույն հազան գազաթներ լազուր,
սարսուսը պատեց միջոցին, հողին.—
արևն եր լելավ հրով գազագուն:

Յելավ լերգեր գրովը, նալեց առավոտին.
ու առավոտը հրով եր վառվում.
քաղաքը նորազարթ, զեռ նոր լելած վոտի—
ահագնաթափ ու զոռ դառնում եր:

Ամենուրեք լեռ, բազուկների գրոհ,
հենց իրա շուրջը, հենց իրան մոտիկ:
Պուտը տիրեց:—Ի՞նչ ուներ նա գրած—
վոր փոխեր պահովն այս առավոտի:

— Ինչին ես մնում: Փառքին քերթողի,
հարց տվեց իրան, պուտը, ինքը,
— լեւ գնա՛, ձուլվի՛ր, լերկաթին՝, հողին
ու հորդի՛ր տողերի քառքատինքը:

24 հուլիսի, 1930 թ.



ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱՅԼԲՈՍԻՑ

Լոթի թաղերիդ—լես տաղեր չունեմ,
լերգերըս՝ քարիդ, լերկաթիդ.
լերկաթավորվող որըդ վողջունեմ
ձեռքերըս՝ քարիդ լերկաթիդ:

Յելնում են շենքերը—հայցքներով լինջ,
արել առած ճակատին.
լես լերգի բանվոր, լես շարող վերջին,
լերգերըս՝ քարիդ, լերկաթիդ:

Քանդում ենք հինը, գեջն ու մամուռը,
ձեռքերըս՝ լերկաթիդ, քարիդ,
կառուցման մարտի թափ ու սարսուռ և,—
լերգերըս, ձեռքերըս—ոլալքարիդ:

1 ոգոսա., 1930 թ.



ԿԱՌՈՒՑՈՒՄ

Քարերի ալս բուրգերը ու բուրգերը հողի,
փոշու լերթը հորդուն ու հողմավար,
շենքերի քար վոտները, վեր բարձրացող հողից.—
ահա քաղաքի մեր գեղանըկարը:

Արեավառ կեսոր, հորդուն քրտինք ու տապ,
նորեն ավազ ու կիր, նորեն լերկաթ, բետքն
ահա թելադրում և խրոխտ, ահագնաթափ—
բազուկների մարտը ու մարդը կերտող:

Մահասարսուռ դողով ու կործանման ահից —
հին քաղաքն և կքեր կորաքամակ, ուժատ:
Կանհետանա վաղը, ճարակ դարձած մահին —
հենակավոր տների ալս խուժանը:

Յերկաթե վոսկրաշաբը ու մկանը ցեմենտի—
թող մարմնավորի մեր ալս քաղաքը:
Քարերի ալս բուրգերը ու բուրգերը հողի
և շշակների գոռ աղաղակը:

20 հուլիսի, 1930 թ.



1

Փողոցում—

տնիթ,

արե՛,

քամի՛,—

կառչում և շորերից, դեմքից, ծամից:

Փողոցում՝ բորբոսնած ու հին—

զանգվածները

կրի,

ավաղի՛,

տուֆի՛:

Իսկ վերը —

վորմերի քարակուռ մեջքերը:

Փողոցում—

և քար, և փոշի

ու լերպը ցնծունու—

Ցերպում և բանվոր մաշիղը—

վորմերի ուսից:

Փոշի,

Փոշի,

Փոշի:

Քարերը:

Ահա արել:

Յեզ պատ ու պատնեշ —

Վոր շարել ենք:

2

Քարերը —

Հանքեր ենք հանել:

— Ի՞ր,

Դժնիսք,

անեծք,

ինչպես են խանդարում այդ քարերը:

Փողոցը կտրել են,

քարերը:

Նա ուզեց թեթև ցատկել,

ու շանսած մտերմի բարել,

այնտեղ ուր լերգում են քլունգը,

հնդը, —

Նա ջարդեց

փայտե կըունկն ու...

կողը...

Աւ ընդուստ վոստնեց —
վե՛րը,
վե՛րը,
վե՛րը,
ինչպես թռչունն ալն,
վոր նոր և ջարդում թենքը:

Պոկվեցին շորերի
ժանլակներ և կապ:
— Ո՛, քարի տարափ,
ո՛, փոշի,
ո՛, տապ...

Յելենան,—
հասկանո՞ւմ եք,
նայիրդան այդ նազուն վեներան,
վոր պարպել դիտե
և սիրտ,
և ողի, —
այժմ գերի՞ մեա քարին, հողին:

Նա սովոր փալլի,
հարթության խաղաղ,
այժմ ինչպես քալլի —
նազի՞,
թե՞ կաղա...

Ավա՛ղ,
ավա՛ղ...

Դեմք—
շաղախը,
բետոնէ.
վեմք,
քարեր,
քարեր,
և պատ ու պատնեշ—
զոր շարել ենք:

3.

Մեկդի նետեցին
փայլուն կրունկը—
բանվորներ Յեղոն
ու Հովսեփ «գեղեցիկը»
և ցեխում թաղած
ձեռքերն ու լեղունկը—
շարեցին,
շարեցին,
շարեցին:

1830 թ., հուլիս

ՔԱՐ ՅԵՎ ՔԱՂԱՔ

Փողոցներում փոշեխոխիվ միջորե,
արեգակը հրայրքներով լափլիղուն
և քարերի տիրապետումը նորեն:

Եվենավոր քաղաք տիսուր հին բեռնով,
քարի խումբեր փողոցն ի վեր ազազուն
և վորմերի ծանըլ ուսերը չելնող:

Գորշ քարերի գոռ խոյանք ու խոյապար,
ճերմակ թաղեր ծիծաղավոր, յերազուն
և մուրճերի ալս համերդը հոյակաս:

Մահամնա հին վորմերը դարավոր:
Քաղաք յելնող, քարաղեմ ու փառավոր:

Քարի, հողի, խորհրդավին առավոտ:

1930 թ., մայիսի 15



ԱՌԱՎՈՏԸ

Նորից արեն լելավ, նորից վառեց կրակ,
նորից հանչեց ուրախ պիոներական թմբուկ.
նորից բացվեց շախով մեր սարերի վրա—
խորհրդակին ազատ առավոտը խնդուն:

Մեր գործատան դռան հազար ուրախ աչքեր,
հազար ուրախ գեմքեր բանվոր ընկերների,
— մենք պատրաստ ենք, լեկանք, լերը սուլիչը կանչեց,
լերը արել բացվեց ազատ մեր լեռներին:

Նորից վառ-վառ աչքեր, նորից հայացքներ տաք,
նորից կաշվե բաձկոն, նորից մաշված կեպի,
առավոտվա պես վառ ու արեից ել բարկ—
այդ մեր բանակն և կուռ, պատրաստ աշխատանքի:—

— Զան, մեր բանակը կուռ, մեր կրծքերը լերկաթ,
բետոնի պես ամուր մեր բանակը գրանիտ,
ջան, մեր ձեռները կոշտ, մեր ճակատը հպարտ—
ընկձել չի կարող և վոչ մի թշնամի:

Նորից պիոներ արեն վառեց լույս ու կրակ,
նորից կանչեց ուրախ մեր գործատան շշակը,
նորից բացվեց շախով մեր աշխարհի վրա—
խորհրդակին խնդուն առավոտը հպարտ:

ԳՆԱՑՔԸ

1

Ինչպես բանակ բանվորական—
պատերազմի դաշտը մեկնող,
յերկաթակուռ ու աննահանջ,—
ինչպես բանակ բանվորական,
շարք են մտել գծում յերկու,
վագոնները դիսցիպլինար—
ինչպես բանակ բանվորական:

2

Ինչպես ավագ հրամանատար,
առաջապահը բանակի—
տոն ե տալիս պատերազմին,
ինչպես ավագ հրամանատար—
շոգեկաթսան կոփված ուազմիկ
ու տանում ե մարտը անշեղ—
ինչպես ավագ հրամանատար:

1926 թ.



* *

Տեքստիլ ֆաբրիկում,—ցերեկ, իրիկուն,
բանում ենք մեկտեղ յես ու նա,
քրտնում ենք մեկտեղ, յեռում որն ի բուն—
մենք մտերիմ և ուրախ:

Անցնում ե որը խինդ ու ծիծաղով,
որը լուսավառ ու ժպտուն,
և արևային մի պայծառ տաղով—
նրա աչքերն են հար ժպտում:

Նրա աչքերը՝ յերկնի եմալից,
մազերը՝ արև, վոսկեթել՝
իլիկների պես իմ մեքենալի—
ուրախ ե նա ու թեթև:

Սիրում եմ նրան այնքան սրտապինդ,
ալզպես ե սիրում նա յել ինձ,
մենք իրար ընկեր, մենք իրար մոտիկ,
աշխատանքի մեծ բանակից:

Տեքստիլ ֆաբրիկում,—ցերեկ, իրիկուն,
բանում ենք մեկտեղ յես ու նա,
քրտնում ենք մեկտեղ, յեռում որն ի բուն,
շուրջը՝ կյանք ու մեքենա:

ՀԵՂՐՈԿԱՑԱՆ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԸ

1

— Դում, դում, դում, դում,
ոռւմբերը թնդում են,
թումբերը քանդում են,
ճամբեղ հարթում ենք, արի:

Խորշոր անդնդումն ենք,
սրտով բալց խնդուն ենք,
ժայռերը քանդում ենք, արի:

2

Խորշոր անդնդումն այդ,
յերբ ոռւմբը թնդում եր,
յերբ ժայռը քանդվում եր,—
ընկավ ընկերըս արի:

Ժայռի տակ մեռավ նա,
կանգ չառավ յեռանդը,
կրկին քանդեցինք, արի:

3

Տները, աները,
Կոնդի հին տները,
անլուկա, կույր տները—
նայում են գեմի դարից:

Նավթը հատել ե,
լամպը մարել ե,
մութը պատել ե, արի:

4

— Դում, դում, դում, դում,
ծափ ու խնդում ե,
ձորը թնդում ե,
սրտով խնդուն ենք, արի:

Յերգը թնդում ե,
յերթը խնդուն ե,
կյանքը ժպտում ե, արի:

1926 թ.



ԶՈՐԱԳԵՍ

Ծիածանն ե փոսլում բլուրներից բլուր
ու լիոններից անդին, մշուշաթե.
և ժայռերն են ընկնում համառ ու մաքառում
ու ծեր գետն ե փոխում ընթացք, և թափ, և ձհ.

Կրկին լիոններ—պսակագիր ու մամուաշուրթ,
վոր քմայքով ծանրացել են կախված վերից.
նրանց ծոցում իրենց վերջին որն են մաշում—
փշրանքները արքալական դղյակների:

Այնակ հորդել ե խնդութիւնն ե խրախճան,
իշխանազունն ե հալածել լեզնիկներին.
ապա առատ կողոպտել են քրտինք և ջանք
հողի մարդուց, հետո կյանքն են խլել չնչին.

Հետո դարեր ու տարիներ, և վերստին,
այս ժայռերը արնոտ շուրթով են ժպտացել,
մինչև վերջին զարկն ենք տվել մենք հարստին,
մինչև պայծառ առավոտն ենք լուսարացել—

Ալժմ մեր բանակն և վարարել այս ձորերով,
ստեղծում և հերոսարար ու մաքառում,
մեր զեմ ժայռեր խստարարո ու աններող,
մեր մեջ ուժի հնոցներն են բոցավառվում:

Մենք կլանք կտանք նոր արեի—ուժից հառնած,
ու կփռենք և լուս, և ուժ, լեռներն անդին,
և խնդությամբ, արիասիրատ տուն կդառնանք—
դրոշակով հաղթանակի ու լեռանդի:

1928 թ.

Ա Լ Լ Ա Հ Վ Ե Ր Դ Ի

1

Իջավ կապուլտ իրիկուն, աստղերը վառեց,
անտառը սարսռաց, խշաց յերազկոտ.
գետը նոր ուժով յելավ, վարարեց,
խավարում կորան լեռներն ալեկոծ:

Խոր ձորերը խուժեց մութը կապարե,
կապուլտ վրանը վերի — մթազնեց.
մթնում շողաց զիսաստղ մի, սուզվեց, մարեց.
հեռվում վառվեցին դողդոջ կրակներ:

Անցավ վերջին գնայքը ճիչով խեղդուկ.
արձագանքը ձորերում դեռ թևում է.
այդ քամին ե սույլով, անտառներում յերգում
և գիշերը հանդարտ նոտում. տեսում է:

2

Իսկ այնտեղ լույսեր, լուսեղեն հեղեղ,
այնտեղ գիշերը ճեղքել, պատառել են.
դրսից լեռների մի խորդուրորդ կեղե,
ներսից — յերկաթի, ուժի վարարելը:

Դրսից — ժայռերի շուրթերում հպուն —
հակա ծխամորճ մի, ահա ծխում ե,
ներսում — խավարի ծովում խարխափուն —
ուժի արշավը. լույսի բղխումը:

Դեմքեր զորշավուն ու քրտնատարափ,
(ահա ոլրոֆիլ մի բրտնզե ձուլվածքով),
ուսեր ծանրածանր, շարքեր անվարան,
և գաղջ խավարում լույսերը լերզող:

Այնտեղ պղնձի, կյանքի պայքար ե,
համառ իջնում են քլունզներն ամեն
փլչում ե ժայռը, ընկնում ե քարը
ու չի դիմանում ժայռե թշնամին:

3

Շուրջը լևների անտառոտ լանջեր,
ու գետի յերզը հեռվից, հանդարտ:
Սուլիչի հախուն, ուժգնազոռ կանչեր
և զողով սարսուն ծմակ, անտառ:

I. ԳՈՐԾԱՐԱՆԸ

Վորքան հուրեր: Վորքան վիժանուտ
վարսեր կրակի—ողը ալիքող:
Ազդ արե՞ն և արդյոք այդպես թեժանում
իր ծիրանահանդ ու տոկուն լերգով:

Թե՞ բարախում և ալնտեղ շառաչուն—
աշխատանքային մեր յերկրի սիրտը:
Մարմնավորվում և այնպես հարածուն—
յերկաթավզորվող յերգերն ու խինդը:

Վորքան հուրեր: Վորքան վիժանուտ
վարսեր կրակի—ողը ալիքող
— Սոցիալիստական հուրն և թեժանում
և հաղթանակում յերկաթե լերգով:

2. ԼՈՒՑՍԵՐԸ

Մութ հանքահորում փայլում են համըր —
ըրոնզավառ գեմքեր կարբիտի լուսից.
և քլունզները յերգում են ծանըր,
կաթում են շիթեր ժայռից, ճակատից:

Յերգում են տոկուն, յերգում են հաստատ,
կարբիտի լույսերն ել վառվում են.
իջնում են քլունզները համառ ու վստահ,
խել ժայռերը դեռ համառում են:

Նրանք յերգում են քո բազգի համար,
քո յերկաթե վաղվա ու հաղթանակի:
Յերկաթավոր, արագատեմպ աշխարհ —
Խորհրդային յերկիր:

1930 թ., Փետրվար.

ՆԱՄԱԿ ՀՈՐՍ

Իմ հին բարեկամ, մանկության ընկեր,
կառուցում ես նորից թաղեր ու շենքեր
ու այդ շենքերի բարձր կատարից—
ահա վաստակի քո հիսուն տարին:

Տաշում ես ելի գուռ և լուսամուտ,
բազուկդ գարձալ կոփված և ամուր.
և համատարած այս մեծ պայքարում—
մեր բանակի հետ զու յես մաքառում:

Բայց յես հիշում եմ, յերբ վորդիոր մանուկ,
դիտում եր հորն իր, վոր այնպես բանում—
բերում եր հացը, ընկույզ ու կաղին,
վոր մանուկն իր չար՝ յերդի, ծիծաղի:

Մանուկն այն փոքրիկ հիշում և հստակ—
թե ինչպես իր հոր ծնկերին նստած,
կորդել և առատ վաղաքշանք, հեքյաթ,
մրգեր քաղցրահամ ու յերդեր չերդած:

Հետո խաղացել հոր հետ հասարակ—
մանկական խաղեր, այնքան բազմերանդ,
և հայրը նրա, տեսել հրճվանքում—
թե վորդին իր չար՝ ինչպես և աճում—

Յեզ ալժմ վորդին այն հասակ և առել՝
դրում և համեստ յերգեր ու տաղեր,
և նույն քրտնաջան ու նույն յեռանդով—
ծեր հայրը նրա կերտում և խինդով:

* * *

Իմ հին բարեկամ, մանկության ընկեր,
կառուցում ևս գու թաղեր ու շենքեր
ու այդ շենքերի բարձր կատարից—
ահա վաստակի քո հիառն տարին:

Քո շուրջը ելի տաշեղն և հորդում
տաշում ես ելի լուսամուտ ու դուռ
ու տաշեղի մեջ քրտինքդ և ծորում—
զու անխորտակ նաև այդ փրփուր ծովում:

Կերտիր դարձալ գու, կերտիր նոր աշխարհ,
թող նոր շենքերը յելնեն անդադար,
բանող ու անդուլ գու, իմ չերգած հերոս,—
թանգագին հայր իմ, ուստա Մարտիրոս:

1930 թ., գետրվար



ԲԱՆՎՈՐԻ ՅԵՐԵՒԱՆ

1

Հայրը՝ նրա բանվոր և հասարակ,
բանում և քաղաքի մի տպարանում,
պապն ել և բանվոր, հասակը առած,
ինքը՝ թռվառուն, կենսուրախ մանուկ:

Ծնվեց նա քաղաքում, մեր խորհրդային,
պիոներ ողակը «Մկրտեց» նրան,
տունն իրանց—դիմ բանվոր ու կոմունիստ,
իսկ իր գլխարկին՝ «պիոներ» և զրած:

«Մկրտեց» նրան պիոներ ողակը,
անունը՝ Փանոսի տեղ զրեց՝ Փարոս,
բանվորական ակումբը նրան կեցցէ զուաց,
ու մուզիկան հնչեց, յերգ ու բարով:

աչքը բացեց նա ընտանիքումն իրանց,
պատից կախված տեսավ մի հրացան,
կենին ու Ստալին տեսավ պատի վրա,
և այլ նկարներ պատին ցիր ու ցան:

Դարձել ե նա արդեն յերկու տարեկան,
խոսում ե անկապ, թոթով ու կիսատ,
նրան մոտիկ են, նրան բարեկամ—
խաղալիքները, «մաման» ու «նելին բիծան»:

Խաղում ե նա ընկերների հետն իր զբացի,
քայլում ե աշխույժ—«մեկ-ուկնա, մեկ»,
և չարաճճի ուրախ խնդագին—
խառնում ե իրար խոսք, ծիծաղ ու յերգ:

* * *

Հայրը՝ նրա բանվոր ե հասարակ,
բանում ե քաղաքի մի տպարանում,
պասխ ել ե բանվոր, հասակը տռած,
նա՝ հոկտեմբերյան կենսուրախ մանուկ:

1926 թ.



1. ԿՈՒՐԸ

Իմ հարազատ, ստեղծագործ, իմ կուր,—
«զիժ» են ասել ու նղովել
տաղ են յերդել մաքերով կույր—
տարտամ քնարները վոխայեռ:

Յեղ Արազն ել հեկեկ-հեկեկ—
լաց ե յեղել այդ որերին,
ստելության տաղեր յերդել
և վրեժի մաղձը դեղին:

Իմ հայրենի, իմ հարազատ, իմ կուր—
սահանքներով ստեղծագործ,
ալիքվում ես թափով հախուռն.
յերդերով ու հաղթանակով:

2. ՄԱՏԸ

Գորշ լեռների մշուշ պարուժ,
ավանդական գեմը դարի,
մի մատ հոկա—կյանքն և վարուժ
և ոիրական և վիթխարի:

Դեմը մեռած դանկը վանքի, —
Լերմոնտովյան կույր Մծիրին,
կմախքները պաշտամունքի,
աղերսորհն կախված վերից:

Սակայն մատը այն վիթխարի, —
վորպես պատգամ, պայծառ անուն,
ծանրանուժ և, վորպես խարիսխ,
վորպես զբոշ մարտը վարուժ:

Յ. Դ ՐՈՇԱԿԸ

Մագնոլիաներ ճերմակ,
ու վարդեր բոսւնցքված,—
իմ հարազատ, իմ մայր—
Խորհրդային Վրաստան:

Կարմիր աստղի ներքո—
մարտղ հաղթական,
աշխատանքով, յերգով
և փառքով վաստակած:

Յերկաթամեջք յերկիր,
արևադեմ ու վառ,
զբոշակն իմ յերգի, —
Վրաստան իմ պայծառ:

4. ԱՎԻՆՆԵՐԸ

Անտառվում են ու ընթանում—
պողպատ սվինները սայրսուր,
և հորդանում, և խտանում,
և գետինն և սաբսում:


Կարմիր շարքերը բանակի,
Փրոնտում մարտի ու կառուցման,
դրոշակակիր հաղթանակի—
պատճեշվում են լեռնանման:

Յես ել մարտիկ, զինվոր համառ,
սվինսովոր պողպատակամ,
կընկնեմ մարտիդ: Փառքիդ համար—
Խորհրդային իմ Վրաստան:

1930 թ., Գետրվար 20
Թիֆլիս



ՅԵՐԳԵՐ ՀՈՂԻՆ



ՅԵՐԳ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ

1

Մամուաշուրիթ ժայռեր: Յերկիր քարի:
Աղանձուն հողի թախիծը չոր...

Յելեր ևն վերջին, վերջին պայքարի—
մեր բանակները մարտնչող:

2

... Հողը մրկում ու տապում եր,
ով ջուր կտար, ով խնդում:
Աըել մաղձն իր՝ թափում եր,
ու «Հայոց սարը» խնդում:

Դեմը ձյունե յերկու վրան—
«գրախտավալը յերկիր»:
«Հայոց դահի» փառքը վռաղ
և ուռճացում վերքի:

Հետո արլուն, մոխիր ու «ազգ»,
սևահողը ամուլ,
չոր գաշտերի վրա յելած—
յեռագույն ու սամում:

Իսկ գետերը գեռ խոռվ—
«Պղտուը ջրով յեզերքին
«Դարիվ, դարիվ խմբելով
«Փախչում ելին լալագին»:

Գետեր՝ ահով հորձանվող,
գետեր՝ պայքարի դբոշ
դաշտեր՝ ժանտաղեմ ու անող
և հորդուն վոխ ու կրոն:

Պղտորագեմ հայացքով—
պոհաները գեռ քինոտ,
ջրում—արյուն վորսացող,
մոքեր տարտամ ու դինով:

3

... Կրկին արյուն, մոխիր ու «ազդ»,
սեահողը ամուլ,
«հայոց նախնի փառքը» վոաղ,
յեռաղույն ու սամում:

4

Յելավ արեր, պայծառ յելավ,
հողին—ջրանցք ու Հոկտեմբեր,
հաղթանակով ու վառ յելավ—
խորհրդային արեր մեր:

Յերակներում արյուն յեռաց,
սեահողի այն գեղնամութ,
ելավ հոսեց յերակ-յերակ—
կապույտ արյունը հորձանուտ:

Բացվեց պալծառ նոր առավոտ,
խորհրդային վառ ծխածան.
Նոյեմբերյան վարդ փառավոր—
կարմիր գրոշակ ալեծածան:

Վողջույն արև, և սեահող,
ջրանցք ըետոն ու եղեքտրիկ,
վողջույն բանակ մեր մարտնչող—
պողպատակամ ու ինդուստրիկ:

1929 թ., նոյեմբեր



Շ Ի Ր Ա Կ

(Համագումար)

1

Շիրակ—

յերբեմն թնդանոթն և հերկել քո կուրծքը,
բերքդ կարմիր ու ար
վոռողել են հերկերն այդ—
արնատար հազար կանար:

Ճռել և վիզը գյուղացիդ—

մի պատառ հացին կարսու,
գյուղացիդ կմախք յեղներովն իր—

չանկում եր կուրծքդ չութով,
աչքերը վերամբարձ ազոթում Աստծուն,

հուկսը կապում արգանդիդ չոր,
խոնջանքի բեռը թիկունքին—

դառնում տուն,

սպասում յերկար—

վոսկե յերկունքիդ,

բայց արգանդում քո—

սերմերը վիժում ելին,

կամ

ծնում հասկեր—
գյուղացուդ պես կմախք,
յեղներիդ պես կմախք:

Ու տնքացել ես զու—
յերկար,
հիվանդ,
անկար . . .

Ոզուտ չկար—
թեկուզ կաշին խել շիրակցու արտասվեր,
թեկուզ ճակտիցը նրա կոշտ—
քրտինքի կանալ հոսեր:

2

— Հոյ, հոյ,
մեկ ել,
մեկ ել
մի գրան ել
մի ոռոմը ել
մի թռոմը ել
մի ժայռ ել քանդենք—
արդեն մոտ ե Հոկտեմբերը Շիրակի:

(Գոյամարտը մեծ ե:
Դիմացում—
ախոյանը Շիրակի,
մի վիշտապ կծկուն,
մի լեռ անառիկ:
Բայց մարդը յելնում, տիրում ե,
ինչքան ել նա համառի):

— Հայ, հայ,
մեկ եր
մեկ եր
մի զբան եր
մի սնւմբ եր
մի թնւմբ եր
մի ժայռ ել քանդանք—
արգեն մոտ է Հոկտեմբերը Շիրակին

3

X Զան, Շիրակ
ջահեր բերքուն ու վերածնված:
Շիրակ,
կոմսոմոլիստիա զնվուն, ուրախ:
Դեհ, աղասի քամուն առւր վոսկե վարսերդ,
կապույտ ժաղավեն ենք բերել—
վարսերիդ, Շիրակ:

Յեկավ քո կարմիր Հոկտեմբերը,
զրկեց քեզ կապուլտ թերով,
կապեց արակրդ իրար—
կյանքի թելերով:

Արնատար նոր սիատեմ կտա քեզ Շիրակ,
Հոկտեմբերը կհնարար,
կը կանգնես վոտքի,
սմքած ամբարներդ
կելնեն բերքով առլցուն:

Գյուղացիութեալքի հնին մաշող,
Աստծուն,
կը կապի հույսն իր—
Ջրերիութեալ լուսաշող,
և եւ չի լա—
աչքերով ու կաշով.

1925 թ., Մայիսի 20



ԳԱՐՈՒՆ

Յեղան ձմրան մուժը—
շուշանները ձյունե,
—գարսնեն, կյանքի, ուժի,
պճրանքներով դռւնեղ:

Կայտոեց ջինջ մի վտակ—
շուրթեր ձյունը ծծող,
հողը՝ զգվանք դտավ,
ծիլը՝ արե ու շող:

Հողը յեռաց հեքով,
մակընթացով յելավ
ու արեր կրքոս—
յերգեց գաշտի վրա:

Յերգեց յերգը տճման,
բերրիացման, մարտի,
հառնան յերգիցն ալդ վառ—
դողդոջ ծիլերն անթիվ:

Հանգում քրտինք ու յերգ,
կնճիռները հողի,
հեքը յերկաթալեռ,
յերկաթավոր ուղի:

Վորքան ոլրկուն ու ժիր,
մկանունքներ ունես—
զարուն կյանքի, ուժի,
ովքանքներով զունեղ:

1930 թ., 10 ապրիլի
Մաստալա զյուղ

ՃԵՐՄԱԿ ՄԵԽԱԿՆԵՐ

Սեղանիս վրա, լուսեղեն յերգով—
ճերմակ մեխակների բղխումը:
Ժողովում են ինձ հետ ամեն առավատ,
ու ամեն ոք ինձ հետ յերգում են:

Վարքան պայծառ են նրանց աչքերը
ու զվարթափակյը հայացքներով խոր,
մեր վաս արեից նրանք աճել են
և ուրախ են այս որերի յերգով:

Զե՞ն արդիոք նրանք պայծառ շարքերն այն
հոկահմբերիկների, վոր ամեն առառ—
պատուհանիդ մոտով անցնում են հպարտ,
նազուն քայլերով ու աչնքան զվարթուն:

Զե՞ն արդյոք նրանք աղջիկների ջի՞նջ
այն խոհուն աչքերը մանկական,
վորակ կարգում ես ցերեկը վճիռ
ու վաղվա մանկան ապագան:

Զե՞ն արդիոք նրանք որերի փայլը,
այս արեի յերգը, ձերմակ ու բեղուն,
վորին զու այնքան, այնքան սրտավմայլ ես,
վորին զու բերում ես սրտիդ զեղումը:

Արդ, մեխակների այս ձերմակ վնջին—
այսոր սրտային տողերը,
զողովն հասակներն այն, ու աչքերը ջինջ—
այս յերգերովը թող ներբողեմ յես:

* *

Սեղանիս վրա լուսեղեն յերգով,—
ձերմակ մեխակների բղխումը
ժաղուում են ինձ հետ ամեն առավոտ,
ու ամեն որ ինձ հետ յերգում են...

19 Յունիսի, 1930 թ.



ԶՆՄԱՂԻԿՆԵՐԸ

Մասրուկ

Ճերմակ սավանից յելտն մշտշում—
ծաղիկները ձյունե, մաքուր, մաքուր;
Ռումն եմ, մումն եմ գարծյալ հիշում,
ով և սիրան իու այնպիս թակում:

* * *

— Ծաղիկներ, ձյունե բաժակներով,
այն աչքերն եք պայծառ, հեռվի.
իսկ ժպիան այն ջինջ ու դերող—
ով ուղարկեց ձեզ այն հեռվից:

Ի՞նչ եք պատմում ձյունե շուրթերով,
արձագմնդն եք այն ժպիաների,
փոր իլենց անրիծ, նուրբ թևերով—
զովերն այն հեռվից ըերին:

Դուք ասում եք ջինջ եք այնքան,
և սիրող այնպիս ջերմ ու հախուռն,
բայց ձեր ժպիաը՝ կարճ ե, տկար,
յեզ վախճանը ձեր՝ ցուրտ ու տխուր:

Իսկ ալն, վոր ծաղիկ և ձեզ պես,
ձեզ պես ջինջ ու նորաբողբոջ,
նա ցուրտ ու սարսուս չունի յերբեք
ու լեցուն և հրով մի բորբ:

Նա յել ժպիտ ունի ձեզ պես,
բայց չի գողում փշող հովից,
նա չի սարսում հողմից յերբեք
և ահաղնած, կատղած ծովից:

Նա յել զինվոր մի ամբակամ,
յերեկ՝ կարմիր փողկապավոր,
այսոր՝ առած ույժ ու մկան,
զվարթագետ ու ժպտավառ,—

մարտ և մղում մեզ հետ մեկտեղ,
մարտը այս զոս ու կատաղի,—
փոքրիկ զինվոր, փոքրիկ ընկեր,
այս զարունից յելած ծաղիկ:

* * *

— Ծաղիկներ, ձյունե բաժակներով,
այն աչքելըն եք պայծառ, հեռվի.
բայց ժպիտն այն ջինջ թերով
ով ընծայեց ձեզ այն հեռվից:

1 ապրիլի, 1930 թ.

ՀԱՍԿԵՐԸ

Հասուն հասկերը սրվիւմ էն, հսոււմ,
հասուն հասկերի վասկեվարս կհսոր,
քիստերը սիրս խոսք էն փրափսում,
իրար էն քավում լուսե յերեսով:

Արեի ծնծզան ծափում է վերից,
ծփում է ցորնի ցնծավետ ծովը.
ծիլերի աղատ, նազուն թեկբին—
փարվում է պազշոտ տմբան գոլ հովը:

Յերեկվա զողզոջ ճկուն ցողիկը—
հաստատ հաստկով ու վասկեվորուն,
առկաց յերկունքին, յելավ հողից վեր,
այսոր իր լուսե թելն է վոլորում:

Յերեկ յերկաթի, բազկի կոփկ եր,
այսոր հասկերի վասկի միջորի:
Ծնծա, վասկուն աբա, ծփա, լելիք վեր,
վազվա գրոհին պատրամատ հնաք նորեն:

23 հունիսի, 1930 թ.



Ա Ր Տ Ե Ր Գ

(ԳՅԵՂԱՎՈՐԱԿԱՆ)

I

ԾԼԻԼ ե արտըս,
Ճիւռւմ ե արտըս,
ԼորիԼ ե դարդըս,
Ճան:

ԽՆԴՐԱՆ, զվարժէ ե,
Նոր բացլած վարդ ե,
Մրտըս ազատ ե,
Ճան:

Կահաչ ե դաշտը,
Կորավ յերաշտը,
Ամառը հաշտ ե,
Ճան:

ՅԵԼԻԼ ե նորը,
ԽՆԴՐԱՅՄՅԱՆ որը,
Գյողալ տըակտորը,
Ճան:

Շողիկը՝ շող ե,
արեի շող ե,
Շողիկը նոր ե
ջան:

Կարմիր ծաղիկ ե,
ազատ շաղի մեջ
պիսներ Շողիկը,
ջան:

— Շողիկ իմ, շող դու,
արեի շող դու,
ուրախ թլոփը դու,
ջան:

Երեւ ե արտը,
ձվում ե արտը,
կորեւ ե գարզը,
ջան:

1926 թ., հունիս



ԲԱՄԲԱԿԻ ՑԵՐԳԸ

1

Համայնական արտերն են փարթամորեն պճնվել—
լույս գանգուրները հողի, արծաթածուփ ու բեղուն,
և արեգակն և առաստ ջերմությունն իր պարզեց—
հողին հուռթի ու կորովին մեր յեռուն:

Ու խոպովները արծաթ, կոհակ-կոհակ ծավալուն,
և արեգակը վոսկի, վոր իր սանրով լուսառատ—
հարդարում և աշխույժով լույս վարսերը հորձանուատ,
արգասավոր մեր հողին և իր բերքին կենսավառ:

Մատները գորշ ու հողե մեր գեղջկուհու կոշտացած, |
ու բազուկը ղեկավար տրակտորավար պատաճու,
նա, վոր գիտե պարզեց սևահողին շունչ ու կյանք
և կոլեկտիվ դաշտերին յերկաթավառ խնդություն:—

Հոյ, մեր հողն և արդավանդ, փարթամորեն պճնվեց
լույս գանգուրները հողի արծաթածուփ ու բեղուն,
հոյ արեգակն և առաստ ջերմությունն իր պարզեց—
հողին հուռթի և կորովին մեր յեռուն:

Աղջիկները վարսագեղ, պատանիներ զվարթուն,
ջան, բաղցւկները տուոյզ և տիերը կոշտացած,—
ճակատներից գորշաղույն, ազի շիմեր ևն կաթում
ժողովում են բերքը մեր տատարեն պարզեված:

Ու չինչ արեն և ժպում—զրոշակը դաշտերի
և աստվան և փովում կապուտաթիւ լեռներից,
արգեն յեսում և հազը, բերքակատակ ու բերքի
ու դաշտերում պայքար կա, և արշավը ձեռների:

Հիշատակին ենք թողել ճախարակները փայտե
և մամիկները հողե, մամագեմու հինայած,
ուր որերը մեր պայծառ, հաղթանակը պատպառե,
ուր մամիկները մասնող, մազաղաթիւ, խունացած:

Զան, մաքոքները թոշող, պիտներական յեռանդով,
Ճառագայթներն արեի—իլիկներին ընծայլած,—
այնտեղ հյուսում են նոր կյանք—լույս թերեռվ ու
խինդով
և փովում և զրոշը մեր հաղթանակող ու պայծառ

Այդ մեր բամբակն և փթթում: Մեր բաղուկները ջլուտ,
մերենան և շափշափում սեանողում արգավանդ:
Այդ մեր արեն և վաղովում—միջորեյի ու ջեռուս
և հաղթանակն և փովում մեր աշխարհում յերգառաւ:

1929 թ., նոյեմբեր.



ՅԵՐԳ ԱՇԽԱՆ

Աշխան, վոսկեփետուր ու ստեղծաբար,
վողջուզն մրգիդ հասուն ու յերգիդ վասակի,
ահա հորձանում և տաք արյունը վարար—
յերակներում յերկրի ու գասակտրգի:

Վողկույզները վերջին, տերեներում գալուկ—
լույս ստինքներ հողի, վոսկուն ու կենսառատ,
արեգակից զողցած ժպիտներով գարուն,
աշնանային փառքով և այնքան լիազարար:

Աշխան, նոնանման—սպատուծ, արնակարմիր,
արեգակով ոծուն և ժպտակուտակ,
ահա, հանդերը մեր, յերգով գարնանային
և յերկաթի հեքը ստեղծագործ ու տաք:

Մեռնող պոետի պես—ուռիները թախծոտ,
հետո դեղին թերթեր, անոգ, քամահալած,
ու առվակի ձզված չութակը մելամաղձոտ,—
ինչ վոր յերգեր մեռնող աշնանաշունչ ու թաց:

Քամին քրքրում և աշնան յերգարանը,
ու շպրտում դեղնամուայլ թերթեր չորսղին,
առուն նկարում և զողղոջ վազքը նրանց,
և ուղեկցում լախծատխուր յերթին:

Աւ կրկին պոևաներ աշնանամաղձ ու քեն,
ուսիների յերազ, տերեաթափ յերգի.
Նրանք արծաթ առվակ ու տերեաթափ կերպին,
հոյ, գաշցերումը մեր—յերկաթի յերգն և

Իսկ մեր բեզուն հոգը համբուրվում և կրքու—
առաջին անձրեի շիմերի հետ հորդուն.
Հունող գարնանային ու յերկաթի յերգով—
բերկրում և հոգը ու սրթորթում:

Աշնան վասկեփեռուր ու ստեղծաբար,
վողջույն մրցիդ հասուն ու յերգիդ վաստակի,
ահա հործանում և առք արյունը վարար—
յերակներում յերկրի ու գասակարդի:

Ահա, բերք և, ու յերգ, ու պողպատ, ու արե,
ահա, յերկաթի վաշտեր—գաշտերիդ գորշ ֆոնին,
մենք քայլում ենք ասաջ, հետ զպրում գարեր
ու մեսնում և պատմությունը Քունեփոնի:

Վանքերի ու սիրուեաներ գեռ հորիզոնիդ,
զորշապսակի, ու ասրաւամաղեմ, ու հապալուն,
ըսց յելնում և արե մի այլ պայծառ, հրաղենիթ,
և ձգվում և մեր պողպատն յերկաթահուն:

Աշնանային որեր, գեղնատերե ու հողմավար,
մեսնող հիշատակներ և աշնուա յերգեր,
ու յելնում և յերկաթե մեր յերկիրը պայծառ,
հաղթաբազուկ մեր գասակարգը յերկաթաձեռք:

Յելնում և թումբ տա թումբ, քար տո քար,
յերկաթը՝ յերկաթի հետ ու ցեմնատած,
ուր հիշատակները մեռնող, ուր յերեկի ներկան,
ուր յերգերը գալուկ, աշնանային ու թաց:

Յելնում և նու հողից, ու մեր բազկից,
յերկաթաթե մկաններից յերկրի և բնության,
այդ ով և զիմադրձում մեր յերկաթե վազքին,
տերեաթափ հուլսի ու աշնանային յերազ:

Աշուն, վոսկեպետուր ու ստեղծարար,
վողջուն մրգիդ հասուն ու յերգիդ վաստակի,
ահա հորձանում և տաք արյունը վարար—
յերակներում յերկրի ու դասակարգին

1929 թ., Կոյեմբեր



1. ՏՐԱԿՏՈՐԸ ԴԱՇՏՈՒՄ

Ինչպես վոր թերթում ես մատներով քո զորշ—
ժողոացող հջերն այն յերազածդդ զրքի,
և զեռ ընթանում ես հերոսիդ հետքով,
ու ելի թերթում ես անհազ ու կրկին—

Այնպես ել նու յե—հսկա այն թերթիչը,
յերկաթե մատովն իր շրջում և հջերը:
Նո ինքը հերոսն ե, նո մեծ յերգիչն ե—
այն հսկա զրքի, վորն այնքան շրջել ե:

Հաստեղը թերթերը կրկին նու թերթում ե—
վիթխարածավալ այն ըստվար զրքի,
ու սեահողը այնպես սրթորթում ե,
այնպես վարարումն ե յերգի ու կրքի:

Ու կորթ սեահողը այնպես փխրանում ե,
այնքան հնազանդ ե այդ յերկաթե ձեռքին,
վոր ինքը պսեսն ել նրա պես կանչում ե—
— Վողջույն հերոսին այս, կյանքի մեծ զրքի:

Հատիկ առ հատիկ, բյուրեղ առ բյուրեղ—
փովող վրանը վասկի, ցորենի,
ահա զու զգում ես կծու այն բույրերը—
քրտինքի, փոշու, հողի, ցորենի:

Ծել ե հողից նա, յերկաթից, կյանքից,
մկան ու քրտինք ե տաել ու յելեր ե,
խմաստավորվել ե հատիկ առ հատիկ,
հիմա վրանն իր այնողես փոել ե:

Ահա հատիկն այս, վոր կաբծը ե այնքան,
կարմրակեղե ե, կաթով առցուն,
միջեւ զա նա չե, քու յերդը յերգած
ու պայծառ այնքան, արեով ոծուն:

Նա յել յերգում ե, լսում ես սըվվոցը,
լսիր զու նբա խմաստուն յերգին,
ահա յելնում ե այն մեծ մաքառողը—
պայծառ հերոսն այն զորշաթերթ զրքի:

Յ. ԱՌԱՋԻՆ ԾԻԼԵՐԸ

Զրանցքի արծաթ յերակները փովել
և յերգում են այնքան ջինջ ու կապույտ,
այն չար ծղրիաները, արդեն լուել են—
և ջրանցքն և իր յերգերը կապում:

Իսկ հոգի տակ՝ վորքան ծծող շրթունք,
վորքան փիրուն հատիկ ու ճայթող ծիլեր,
ճերմակ փոքրիկ վորգեր հատիկների սրտում,
վորոնք կցանք են ուզում ու սովորկում վեր:

Եթերն այդ ճերմակ փիրանուտ ու յերեր—
մանկիկի պիս խանձարուրված ու փափկամորթ:
Բայց արդեն կանչում ե—լելնք, յելնք,—
այդ գարնան արեն և զվարթ ու բորբ:

Իսկ ջրանցքի յերակները փովել
այնպես զուլալ ու այնպես քաղցր են յերգում:
Յեկ բարձրանում, արդեն հառնում են վեր—
փուկի ծիլերն այդ կլանքով ու բերքով:

Ա, ԱՐԵՎԱԾ

Արդեն նու շոյում և թավիշ թշերը—
իր մատներովը ջերմ ու ճառագայթե,
այնպես փայտայում և, այնպես քաշում վեր—
նրանց հասակները զողղով ու թեթե:

Իսկ քամին փափսում, քսվում ու անցնում և—
ծուփ են առնում ու ծփում լեռանդով
ու արեր ջերմ այնպես լեռացնում և,—
յերակներում նրանց արլուն ու խնդում:

Ինչպես աղջիկն այն, վոր աչքիդ առաջ—
աբագ աճում ու հասակավորվում և,—
ալզպես ել ծէլերն այն, ջերմություն առած—
դեպի արեր այնպես թեռմ են:

Ու բարձրանում են: Արդեն կարծրանում են—
հատիկները նրանց փուխը ու մածուցիկ:
Վողջ սևահողը այնպես ծածանվում և—
նրանց կենսարար, կայտառ ծփանքից:

5. ԱՐՏԵՐԸ

Հովն և հեռւմ լուս ու տարածվում հեռու,
փափում են մեզմ հասկերը նազող,
ծփանքը նրանց համբ ու սարսըռուն—
զեղ արեն և թեռւմ վոսկի յերազով:

Ահա փովում և ու հեծեծում և—
Խըշշուն կտավն այս վոսկի քիսակըի,
առես այդ ծովն և, վոր լուս հեծում և—
քամու թիերում չար ու հիստերիկ:

Բայց հեծեծանք չի, այդ խինդն և արբշիս,
վոր տարածվում և կոհակ առ կոհակ,
այդ մեր աբեն և արտերի բաշին—
ցանում և յերգեր, և խինդ, և գոհար:

Հողի ճակատն և այդ խորշումազարդ,
վոր հորձանում և ու առատանում,
և այն քիսակը—ջերմ, լուսակարկաչ—
ծոպերն են զբոշի մեր պայծառանուն:

6. ՄԵՆՔ ՄԵԶ

Արշավում են մեր հանդերով տրակտորների վաշտեր
ու յերկաթը գրավում ե խրամ-խրամ.
Ջբանցքները ցանցել են դաշտեր, դաշտեր
և դաշտերում կռլեկտիվ ու յեռանդ:

Ո՞վ տվեց ալսքան ավյուն այն ցորենին սմքած,
ալսքան ավիշ ո՞վ ներարկեց յերակներում հողի,
ով վեր հանեց մոխիբներից ու արնաքամ
այս դաշտերին—տվավ դրոշակը հաղթողի:

Ինչպես յեղավ: Հրաշքո՞վ միթե: Թե՞ փյունիկյան
թռչունն եր այն, վոր բարձրացավ մոխիբներից:
Ո, վոչ: Յերբեք: Մենք զոհել ենք արյուն, և կյանք,
վոր մեր արեն այսպես պայծառ վառվի վերից:

Այդ մեր գրոշակն եր—նվաճեց իրավունքով,
մարտն եր արդար մեր բանվորի ու գյուղացու,
նա վոր ընկավ, նա վոր յելավ հաղթանակով,
նա վոր շապիկն եր արյան մեջը լողացուց:

1930 թ., հունվար



ԶՈՐԱ ՏՈԴ

Հողն ե, հողն ե, յելնում, յեսում,
Մեր բաղկի տակ յերկաթեղեն,
Յեզ արեն ե յերգեր զբում,
Յեզ ջերմոթլունն ե հեղեղել

1930 թ.



ՅԵՐԳ ՄԿԱՆՆԵՐԻ

Տոկուն մկաններ կան մարտումն այս համառ,
Զարկեր խանդավառ, յեռանդ ու լարում.
—Վողջնույն պղնձի, արևի ամառ,
Յերկիր մետաղի, յերգով վարարուն:

Տոկուն մկաններ կան մարտումն այս համառ:

Յերգում ե յերգը, յերկաթը, հողը,
Մուրճեր են իջնում ուժզին ու հաստատ, —
Յելել ե մարտի համառ այն կերտողը,
Մեր դասակարգը պողպատաղաստակ:

Յերգում ե յերգը, յերկաթը, հողը:

Ընթացքը վազք ե ու վազքը՝ մետաղ՝
Մետաղը կամք ե ու կամքը հաղթող.
Գնում ե յերկիրը (բորբոսը նետած) —
Յերկաթի փայլով, քայլով անհողող:

Ընթացքը վազք ե ու վազքը՝ մետաղ:

**Տոկուն մկաններ կան մարտումն այս համառ,
Զարկեր խանդավառ, յեռանդ ու լարում.
—Վողջնուն պղնձի, արեի ամառ,
Ցերկիք մետաղի, յերգով վարարուն:**

Տոկուն մկաններ կան մարտումն այս համառ:

25 Սեպտ., 1930 թ.



ՀԱՎԵԼՎԱԾ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻՆ

Ու վերստին զըրուցեցինք ընդյերկար,
հանգիպեցինք քեզ հետ զարձյալ այս գիշեր,
զու՝ սեղանիս, յես՝ սեղանին արմբկած,
ու սեղանիս՝ յերգիդ վարդերն ու փշեր։

Ահա զարձյալ քո տաղերի դաշնակն ե,
ի՞նչ ես զովում, ումն ես ձոնում ներբողներ, —
անցած զահի ու հեթանոս աշնան հետ —
յերգեր հացին, ու ռազմական հին փողեր։

Բալց մեր կյանքը հիմա ուրիշ յերգերի,
ուրիշ տաղի հուժկու տողեր և ուզում, —
այն վոր հորդուն ու ջերմ հույզեր կբերի,
և կտաղերգի այս հոյափառք ընդպղումն։

Դու զիտես վոր «զեհենամոռնչ զործատան»
անիվները զառնում են այժմ խոլաբար,
ու յերկաթի աղմկումն այդ վորոտան —
մենք կերտում ենք քեզ անհաղորդ մի աշխարհ։

«Բանվորուհին» այնտեղ առուցզ, ջլապինդ,
ժպիտներով կենսածիծաղ և աղու —
կյանք և կերտում ու ոբերի այս թափին
ջանանըվեր — յերգում և ու ծիծաղում։

Իսկ դաշտերի թավշաղալար գարունից—
զեղջուկն աղատ—վաստակի յերգն և յերգում,
«Հացին յերգը», աղխատանքի, լարումի,
յերգում սրտով, քննարով ու քրտինքով:

Իսկ դու հեռու, յերգիչ հողի ու խոհի,
քեզ հետ գարձաւ զրուցեցինք ընդյերկար,
մինչ սարերի զիշերաստվեր լուրթ կողից—
արեգակը խրոխատարար գուրս լեկավ:

14 հունիսի, 1930 թ.



Շուրջըդ մուրճեր ու յիշկաթ,
վաստակի ծով ծավալուն,
հողի բույրն ու շունչը թաց,
և աշխատանք, և լարում:

Իսկ դու շրջիր փողոցով,
հնչիր շեփոր ու փողեր,
ովարապ ովը սղոցող—
և տաղանդը ներբողեւ

Գաղափարի մարզարե,
միշտ որթողնքու ու վճիտ,
ամենեցուն բարբառե—
մաքրությունը քո խղճի:

Զոր բառեր դու կարկատիր
ուղղափառ քո թելերով
և «մարտիրոս» ճակատիդ—
հերոսի փայլ տուր «ներող»:

Թեղ կզովի քո զուռնան —
խմբակային դայլալով,
ու զովեսաներ կբառնա —
քո քննազատն այլալուն...

Իսկ դու՛ շրջիր վաստակած —
քաղաքներով, փողոցով,
հնչիր շեփոր ու փողիր
պարագ ողը սղոցող —
և տաղանդը ներբռողեն

Գաղափարի՛ մաբգարե...

1930 թ., մայիսի 19



ՎԱՂՈՑԻՆ

Յերգս հոսում ե, ինչպես ավագը
սիրոս և յերկում յերգերիս տակից:

Ա. Շահենց

Յերգ ես յերգում, սբտանց ու պարզ
և զու այնքան խորն ես զգում,
թախծատխուր ու սրտաբաց,
և քընարդ վառ ու զգո՞ն:

Իսկ թախիծն այն ջինջ ու վառման,
վոր բերում ես զու քո զբշով —
քաղցր ե ալնքան, քան թե վումանց
քմահաճու ձիչերը չոր:

Ունկընզրում եմ չես հիացքով —
քո քնարին հստակաբար,
և վողջունում — տաղ ու յերգի
տուավոտին քո շաղապատ:

Իսկ մեր զարի արել վառ —
ջերմացնում ե ալզդ շաղոտ,
և յերգերլու ջինջ, լուսավար —
վարարում են, անզին վաղու:

1930 թ., մայիսի 20

Դու զեռ նորել ճյուղ ես մանուկ,
տոկունաթե, ամբարմատ,
վորն աճում ե, վարթամանում,
և այնքան ջերմ, այնքան համառ—
իր հասակի թելն ե մանում:

Հասակը այն թող վոր հախուսն,
անահ լենի վեր աննկուն,
հյութավորվի, գաւնսա ամուր.
Թող չահազնի նա աղմկուն
ահազնաձայն այն չոր քամուց:


Թող վոր ծծի հողը պարարտ,
ավիշովն այն հյութավորվի,
թող չաղմկի զուր ու պարարտ
լերակներովն իր յերգերի—
արյուն հոսի վառ ու վարար:

Դու այս մարտովն ես ընթանում,
և տաղերի տալիս ձեեր,
դու վոր յերգիդ թելն ես մանում,
և վեր քշտած ջլուտ թեեր,
մեր այս պայծառ զրոշն ես տանում—

յերգիր հախուռն, յերգիր խրոխտ,
մարտի յելիր քո յերգերով:

1930 թ., մայիսի 21.





ՑԱՆԿ

1. Դիմումներ Հեղինակին	<i>b7</i> 4
II. ՅԵՐԳԵՐ ՔՍԱՆՎԵՑԻՆ	
2. * *	7
3. Արյունոտ գիշերը	8
4. * *	12
III. ՅԵՐԳԵՐ ԿԱՌՈՒՑՄԱՆ	
5. Պոյետն առավոտյան	17
6. Լենինականի այլբոմից	18
7. Կառուցում	19
8. Կրունկը	20
9. Թար և քաղաք	24
10. Առավոտը	25
11. Գնացքը	26
12. * *	27
13. Հիղբոկայան կառուցողները	28
14. Ջորագիս	30
15. Ալլահվերդի	32
16. Կարքիսի յերգեր	34
17. Նամակ հորս	36
18. Բանվորի յերեխան	38
19. Ցերպեր Խորհրդային վրաստանին	40

IV. ՅԵՐԳԵՐ ՀՈՂԻՆ

20. Յերգ Նոյեմբերյան	47
21. Շիբակ	50
22. Գարուն	54
23. Ճերմակ՝ մեխակներ	56
24. Զնձաղիկները	58
25. Հասկերը	60
26. Արտերգ	61
27. Բամբակի յերգը	63
28. Յերգ աշնան	65
29. Յերգեր հողին	68
30. Զորու տող	74
31. Յերգ մկանների	75

V. ԼԱՎԵԼՎԱԾ

30. Դանիել Վարսեւանին	79
31. Մի պոյետի	81
32. Վաղոյին	82
33. Իրեն	83



Նկատված Փրփուկ

12-րդ յերեսում վերեից 3-րդ տողում «արնավետութ» բառը
պետք է լինի «արնամութ»:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026717

отъс 50 члн.

A ii
26717

АЛАЗАН
ПЕСНИ
СТРОЙКИ
ПОБЕДЫ
под сор архивом 1930 згідань